

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԻԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք զիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպէկ

ՄՇԱԿ ԴՐԱՎԱՆՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ 1878 ԹԿԻ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներէն հետեւեալ օրերէն:
Լրագրի գիրքը և պրօգրամման նոյն են մնում: Մենք ստանում ենք ՍԵՓԵՆԿԱՆ ՀԵՌԵՆԻՐՆԵՐ: ՄՇԱԿԻ տարեկան գինը 10 րուբլ է, կէս տարվանը 6 րուբլ: Գրել կարելի է ԽՄԲԱԳՐԱՍԱՆ մէջ:
ԼՐԱՎԱՆՆԱԿԱՆ ՀԵՐԵՆԻՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատր: Օտար քաղաքներից պէտք է գիմել հետեւեալ հասցեով՝ ТИФЛИСЬ Редакция „Мшакъ“.

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Թիւրքիայի հայերի պահանջները:—Ներքին տեսութիւն: Նամակ Բագուից: Նամակ Մարասիքից: Նամակ Խմբագրին: Ներքին լուրեր: Արտաքին տեսութիւն: Սպանիա: Թիւրքիա: Նամակ Գերմանիայից:—Սառն լուրեր:—«Մշակի» հեռագիրներ:—Յայտարարութիւններ:—Տեղեկացոյց:

ԹԻՒՐԿԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Թիւրքիայի հայերի պահանջները զանազանվում են Թիւրքիայի միւս բերքատունեայ ազգերի պահանջներից նորանով որ հայերը Թիւրքիայից կատարեալ անկախութիւն չեն պահանջում, այլ միայն խնդրում են մտցնել Հայաստանում վարչական ինքնավարութիւն: Հայերի պահանջները շատ համեմատ և խոհեմ են: Հայոց դելեգատները ներկայացրին կոնգրեսին մի յիշատակագիր, որի բովանդակութեան հետ կաշխատենք մանրամասնաբար ծանօթացնել մեր ընթերցողներին:

Այդ յիշատակագիրը շատ լաւ ընդունելութիւն գտաւ կոնգրեսում: Գերմանական մամուլը միաձայն խոստովանում է թէ հայերի պահանջները շատ չափաւոր են:

Այժմ, եթէ Հայաստանը կը դառնայ ներքին, կառավարչական աւտօնօմիա ունեցող Թիւրքաց մի նահանգ, եթէ հայերից ստացվող հարկերի մեծ մասը կը մնայ նոյն իսկ հայոց երկրում և կը գործածվի երկրի բարեկարգութեան և ճանապարհների շինելու վրա, ցան-

կալի է որ նախ և առաջ օրինաւոր ճանապարհները շինվեն երկրի խորքերում, որոնց միջոցով Հայաստանի յետ ընկած և հայերով բնակեցված տեղեր, ինչպէս Վան, Մուշ և այլն, յարակցութիւն ունենային երկրի սահմանների և ծովի հետ: Այդպիսով հայ երկրագործ և արդիւնաբերող դասը ոյժ կը ստանար, նիւթապէս կապահովէր իր զրութիւնը և կը կարողանար պատրաստ լինել մրցել օտարազգի արդիւնաբերողների հետ:

Իսկ եթէ նախ քան շինվէին ճանապարհները Հայաստանի ներսում, որոնց միջոցով կը հեշտանար երկրի արդիւնահանութիւնը, սկզբից անգլիացիների ջանքերով շինվէին երկրի սահմաններից և ծովի ափերից երկաթուղիներ, — անգլիացիները իրանց ձեռքը կը գցէին երկրի ամբողջ արդիւնաբերութիւնը, կը խեղդէին հայ արդիւնաբերող ամբողջ նիւթական զրութիւնը, միամիտ և անփորձ հայը կընկնէր անգլիացիների ձեռքը և նրանց ձեռքում տնտեսական կողմից ստորուկ կը դառնար:

Տնտեսական ստրկութիւնը աւմենասարսափելի ստրկութիւն է:

Որքան էլ Թիւրքիայի հայը անգլիացիներին բարեկամ համարէր, այնու ամենայնիւ լաւ է եթէ նախապէս հասկանայ որ պէտք է շատ զգուշանայ այդ տեսակ բարեկամներից:

Ռուսներից յետոյ, որոնց ձեռ-

քով յարուցվեցաւ հայոց խնդիրը, անգլիացիները արեւմտեան Եւրոպայի երկիրներից ամենից շատ նպատակեցին հայոց խնդրի աջակցելուն, ամենից շատ իրանց հայի բարեկամ ցոյց տուցին....

Բայց չը պէտք է մոռնալ, որ նիւթական և տնտեսական գործերում բարեկամութիւն աւսած բանը անգլիացիներին անհասկանալի մի բան է:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԹՅՈՒՆ

23 յունիսի

Բաւական միջոց անցաւ արդէն, որ ձեր թերթը Բագուի մասին ոչինչ չէ խօսում, այն ինչ այստեղ շատերը ցանկանում են իրանց քաղաքի վրա գրվածներ կարդալ: «Մշակի» պատասխանները մասնաւոր մեծ հետաքրքրութեամբ և ակործով են կարդում. իւրաքանչիւր ընթերցող անպատճառ նախ պատասխաններն է աչքից անցկացնում ու յետոյ սկսում կարդալ:

Հարցիկու տեղեկութիւններ շատ կան, բայց ոչ ոք չէ յօժարում փոքր ինչ աշխատութիւն տալ իր անձին և գրել. և զարմանալի չէ, որովհետեւ ով գալիս է այստեղ՝ փոխվում է յանկարծակի և բոլոր գործերում նիւթականի ետեւից միայն ընկնելով, ջանք է անում «բազիլ օրոց» շարքը դառնել. եւ ինչպէս այսպիսի ձգտում չունենան մարդիկ, քանի որ կենքը, վայելչութիւն, իրաւունք, արդարութիւն, ասպարէզ և ձայն՝ բազիլ օրոց սեփականութիւններն են միայն:

Այստեղ տօթը վաղուց սկսված է և եղանակը օրից օր աւելի անտանելի է դառնում. Բագուի օրից իրանց հոգը վաղօրօք են քայլ՝ ցրվելով դէպի զանազան ամբարաններ և վայելչութեան տեղեր, իսկ նրանցից մնացողներն էլ հեշտութեամբ կը տանեն եղանակի խտուրթիւնը՝ շրջապատված լինելով բարեկեցութեան բոլոր յարմարութիւններով. ինչպէս առաջը անում է. «Թող հիւանդը տնքայ», թող չարաբլին դարձնալ արուեստաւոր, մշակ և գործակատար դասերը, որոնք ստեղծված են այստեղ մնալու: Ամառը հիւսիսային քամին մեր գոյութեան պայմանն է այստեղ. բայց սա էլ այնքան փոշի է բարձրացնում, որ մարդ չնշարդիւնում է և յուսահատվում. փոշիից ոչ միայն թոյլեղն են մնացվում, այլ և աչքերն ու ականջները: Ուղիղ է մի ամիս առաջ բազիլ օրոց փոշիից երբ նախքան փոշիից փոշիով. փայ նրանց, որոնք այդպիսի չտուգած անխնամ փողոցների վրա են բնակվում, ծովում լողալը և ոչ պակաս բարձր է մեղ համար, բայց առհասարակ՝ երանի նրան, ով ամառը այստեղ չի մնայ:

Նախի հանքերը մի դելթական գործութեամբ ամեն կողմից անդադար հրապարակում են դէպի այստեղ մեծ բազմութիւն բերատեսակ մարդկանց, Սրա բարի ու չար հետեւանքներից մինն էլ այն է, որ ամենաթանգ գներով անգամ դրժուարին և անհնարին է լինում բնակարաններ և խանութներ ձգել, թէն նոր չէնքերը արագութեամբ աճում և բազմանում են օրքստօրէ: Մարդ եթէ ցանկանայ բնակարան փոխել պէտք է մի քանի ամիսներով առաջ սկսէ որոնել և հողալ, իսկ շատ անգամ որոնելուց յետոյ ևս մնում են ոմանք յուսահատած, որովհետեւ կամ բոլորովին յարմարութիւն չեն ունենում գտած-

ները և կամ չափազանց թանգ են լինում եթէ այժմ այսպէս է, ապա ձմեռը ինչ կանեն տուն չունեցողները:

Այստեղ առեւ թէ ամենին երկու չունեն վարակող հիւանդութիւններից և առողջապահական նախազգուշութիւններ չեն գործածում: Այնպիսի փողոցներ և մութ անկիւններ կան, որոնք ամենատեսակ կեղտերով և անմաքրութիւններով լին են, ուր ահագին կոյտեր են կազմվել ապականութիւններից: Քաղաքային ինքնավարութեան անդամներից մէկը հետաքրքրութեան համար գննէ թող մի անգամ այցելէ այն քաղաքայինները, որոնցում գիշեր ցերեկ բնակվում և իրանց գործով զբաղվում են բազմաթիւ արուեստաւորներ, վաճառականներ և այլ պարագայումքի տէր օտարականներ, և տես թէ ինչքն կը տեսնէ. անպարտ չինած արտաքինները ապականութեամբ լցված անտանելի զարհուրութիւն են տարածում. բակը կեղտոտ, անձա՝ թափած, անմաքրութիւնների շտեմարան է առեւ: Այդ տեղերի բնակիչները ամեն օրպէ զգում են, սիրտները խառնվում են, բայց չեն վստահանում հարուստ տանտէրերին յիշեցնել, որ իրանց պարտքը կատարեն և մաքուր պահել տան այն տեղերը, որոնց համար այնքան լաւ վարձեր են ստանում: Ողջա մէջ կան բացառութիւններ, որոնք բաւական հոգում են այս կենտրոնների մաքրութեան մասին և կենտրոնները միշտ գոհ են լինում նոյնանից:

Այս օրպէս մեր ամենամեծ կարիքներից միւր խմելու ջուրն է, որի համար գրեթէ սով է: Զրոհորներ կան, բայց նրանց ջուրը դառնալով է և խմելու ու կրակայրի համար անպէտք է. իսկ քաղաքիս արեւմտեան և հիւսիսային կողմերը զանազան հորեր թէ և բարեկամ ջուր ունեն, բայց նրանք էլ շատ սակաւ են, հեռու և մասնաւորների սեփականութիւն, ուրեմն ընդհանուր չէ կարողանում օգուտ քաղել նրանցից: Քաղաքի յոյսը համարեալ թէ միայն Յիւլիանովի ասած աղբիւրն է. այստեղ առաւօտեան 3 ժամից սուրկած մինչև դիշերվայ 12-ը ահագին բազմութիւն է լինում միշտ ժողովված, որոնք հերթի են սպասում իրանց ամանները լցնելու: Այստեղ, ջրկիրների և ուրիշ ջուր տանողների մէջ ամենորեայ երևութիւններ են կրկնել, ձեռք հայտնաբերել, կուլաներ և չայնիկներ կտորներ հանել: Ինչ չը կայ: Այս վերջին ժամանակներս մասնաւոր ջրտարները մեծ յուսահատութեան մէջ էին, որովհետեւ մի կողմից ջուր էր պակասել, իսկ միւս կողմից զօրքը շատացել (թէ մնացող և թէ անցնող), որոնք ևս այս աղբիւրից էին խմում: Զինուորները գալով, հեռացնում են ուրիշներին և սկսում են ահագին տակաւները լցնել, այդ ժամանակ միւսները ստեղծված են լինում ժամկետով կանգնել և սպասել: Սակայն առանց զինուորների և հերթը կամ իրաւունքը նշանակութիւն չունի այստեղ, որովհետեւ տանողներից ով ուժեղ է կամ կուլաւոր, հերթը նրանն է: Հէնց երեկ կէսօրից յետոյ այս աղբիւրի վրա մեծ կուլ կար, սարսափելի աղմուկ էր բարձրացել, և հաւաքվել էին մի քանի հարիւր հոգի. իսկ սօցիալական այնքան խաղաղասէր է, որ այդ կուլներում գրեթէ չէ երևում, այնպէս որ կուլում են կուլում՝ յետոյ միմիայն սպասանով ցրվում: Երեւոյ օտարական վշակը կեղտի մէջ կուլած, ահագին փայլաւ մէջքին՝ համարեալ լաց է լինում ասելով. «Այր ես մեր երկրումն էլ եմ հարկ տալիս, այստեղ էլ մուշտարիկներ էլ բարեկամում են և փողը կտրում ու տանելուս համար. ինչպէս աշխատանք անեմ էլ, ինչպէս պահեմ ընտանիքս և ինձ, երբ ջուր չեն տալիս, մնում եմ պարագայ կանգնած, Զրոհմանքի է թէ ինչպէս Բագուի նման քաղաքը, զանազան պարան աջողակ նիւթական հանգամանքների մէջ, չէ հոգում այս առաջնակարգ պիտոյի մասին:

Անցեալները մի զարաբաղի երկրպագուր հիւանդաւալով քրտնում է ու լաւանում: Մի քանի օրից յետոյ կրկին պառկում է և այս անգամ մօտ եղողները դիմում են դալլաքին որ քաղա-

սկսում է, առանց տատանվելու, առատութեամբ արեւն հանելու ինքնակող բռնի այս գործողութիւնը դեռ շարունակվելիս, թշուառ հիւանդը, արեւնաբաժնի կողմ, հոգին աւանդում է: Երեսին ջուր են սրկում, կռնատակներին հուփ են տալիս, բայց զրոյեղ... յետոյ խորհում են ու խաղաղութեամբ թաղում: Բայց միթէ այս դէպքը բացառութիւն է. միթէ ամեն օր սակաւ դեղ-ծուկներ են անում այս ամենազէտ-բռնիները, մասնաւոր երիտասարդները մէջ:

Լնում ենք, որ «Մարդաս. ընկերութիւնը» և ծխական դպրոցի հոգաբարձութիւնը մտադիր են այս տարի մի քանի երիտասարդներ ուղարկել Մոսկուայի կամ Պետերբուրգի վարժապետական դպրոցները, որ այնտեղ պարտասովորելով յետ դասն և մի որոշակի ժամանակ պատշաճաւոր ուսմանով ծառայեն տեղոյս ազգային դպրոցներում. ինչպէս ասում են՝ արդէն 4 հոգի առ այժմ որոշված և ընտրված են այդ նպատակով: Գովելով այս գեղեցիկ և ամենակարեւոր ձեռնարկութիւնը և աջողութիւն մաղթելով սրան՝ կը ցանկայինք, որ մեր միւս հասարակութիւնները ևս մտածէին և վաղորօք հոգային այս մասին, որովհետեւ ահա 1880 թւականը շուտով վրա կը հասնէ և մեր դպրոցները տագնապի մէջ կընկնեն: Մի բան միայն ցանկանում ենք, որ մերոնք այս մասին հոգալիս և ընտրութիւնները անելիս շատ հեռատես և չըշանայեաց լինեն ամեն կողմից ու աւագի վրա չը չինեն:

Այս տարի «Մարդաս. ընկերութեան» և Վեհափառի օժանդակող քաղաքացի կատարելեցաւ միասին մայիսի 21-ին լուսն և անշուք կերպով, ժողովրդից շատ քիչներ և ընկ. խորհրդի անդամներէից մի 2—3-ը միայն ներկայ էին եկեղեցում: Վարդապետը քաղաք խօսեց, որով դուքանում էր Վեհափառի անձնազօր գործըրը և պախարակում լրագրիւնների և գրողների իւր թէ՛ օտու հրատարակութիւնները լեզվածնում պատահած վերջին անցքերի առթիւ. նա ասում էր, որ ամեն հայաստէր անձը պարտաւոր է մեր հասարակական գործիչների պակասութիւնները ծածկել, և այդ նպատակով շատ երկար խօսեց Փարիզի աշխարհահանդէսի, Անգլիայի թագաժառանգի և Գամբետայի մէջ եղած խօսակցութիւնների վրա և այլն: Բայց անցեալ տարի այս երկու տօները շատ փառաւոր կերպով կատարվեցան եկեղեցու բակում. անազին բազմութիւն կար, երաժշտութիւն, երգեցողութիւն, ճառախօսութիւններ, քաղցրաւնիք, անուշահամ խմիչքներ ու յետոյ ճաշ: Այլ և աշակերտուհիների ձեռագործների համար «ալլէգրի» խաղացին, որից ասում են, գոյացել էր մի քանի հարիւր բուր, բայց այդ գումարը (ընկերութեան մատենաներում մուտք չէ գրվել) նախորդ տարիների պէս, այլ բոլորովին աներկոյթացել է (ասում են): Այս գումարի մասին ընկ. ընդհանուր ժողովի մէջ ևս խօսք չէ եղել, այլ լուսնութեամբ են անցել, Ուստի շատերի կասկածը փարատելու համար, հրաւիրում ենք նրանց, որոնք պատասխանատու են հասարակութեան առաջ, որ բարեհաճեն հրապարակով ցոյց տալ թէ՛ ինչ է գնացել այդ գումարով:

Մայիսի վերջերում մեր երկու սեռի դպրոցներում հարցաքննութիւնները սկսվեցան մի թեթիւ սկանդալով (որի մասին չեմ կամենում գրել և ընթերցողներին ձանձրացնել) և այժմ վերջացած են: Այցելուները բոլորովին տարբեր կարծիքներ են յայտնում իրանց տեսած ու լսածի վերաբերութեամբ, բայց տեսելով անդադար գովաբանելով մասնակիներ իր անաշխատութիւնը յայտնապէս ասում է, որ ինքը այդքան չէր սպասում և բոլորովին դարմացած է այդ մասին: Տեսուչը չը դիտեց ինչի աշխատում էր հաւատացնել, որ աշակերտները առաջին տարին են ուսանում, իսկ շատերի ժամանակը կարճացնում էր մինչև 5, 4 կամ 3 ամիս. բայց ամենքին յայտնի է, որ այն փոքր ի շատէ պատասխանողները 4—5 (եթէ ոչ աւելի) տարվայ աշակերտներ են և շատ տեղերում են ուսել:

Հարցաքննութիւնից յետոյ խորագէտ տեսչու-թիւնը շնորհակալութեան և գովութեան թղթեր է չինել (այդ իր սովորութիւնն է) և վարժապետի ձեռքով չըլեցնում է տնից տուն և ստորագրել տալիս, իսկ ծնողներէից շատերին դպրոց են կանչում այնտեղ ստորագրելու. երևի ուղարկելու են մի օր և իցէ բարձր տեղ:

Տղաները և աղջիկները դեռ շարունակում են իրանց պարապմունքները—սառ գի մէջ ջուր են ծեծում. կարծենք, տեսուչը այս տարի ևս չէ կամենում արձակուրդ հնորհել մասնակիներին, պատճառելով իւր թէ՛ չը մոռանան բոլոր ուսածները:

Մի պարոն հ. Ստեփանէին այնքան ոգևոր-

ված պաշտպանում էր, որ յաճախակի ասում էր. «Մենք պէտք է թողնել տանք նրան իր պակասութիւնները և այնպէս կրթենք, որ արժանի լինի կաթողիկոսութեան. մենք նրան կաթողիկոսացու պէտք է պատրաստենք»: Այժմ նոյն պարոնը խոսում է հ. Ստեփանէին եպիսկոպոսացնելու և անփոփոխապէս այստեղ հաստատելու մասին:

Այս օրերս սպասում ենք համախու թեմի առաջնորդ սրբազան Թադէոսի գալուստին, որը դուրս է եկել իր հօտին այցելութեան: Հասերը յոյս ունեն, որ սրբազան հայրը ամենայն անաշխատութեամբ վերահասու կը լինի յայտեղի տնա-ձութիւններին և կը վերջացնէ խաղաղ, որպէս զի երկպառակութիւնը արմատ չը ձգէ հաշտարակութեան մէջ:

0.

ՆԱՄԱԿ ՄԱՏՐԱՍԱՑՈՒՑ

12 յունիսի

«Մշակի» ընթերցողներին արդէն յայտնի է իմ մի և նոյն լրագրի № 67-ում գրած յօդուածը, որով ես նրանց ծանօթացրի Մատրասա գիւղի հասարակական գրութեան, նրա մէջ մի ուսումնարանի սկզբնաւորութեան և վերջինիս այսպիսի կարճ ժամանակամիջոցում ցոյց տուած համեստ առաջադիմութեան հետ: Այժմ աւելորդ չեմ համարում հաղորդել յարգոյ ընթերցողներին մի և նոյն դպրոցի նիւթական միջոցները մասին, այնպիսի թէ՛ ինչ դրամական աղբիւրներ են յատկացրած նրա տնտեսական կառավարութեան ապահովութեան համար: Այստեղ պարտք եմ համարում յիշել թէ՛ որովհետեւ Մատրասի ուսումնարանը դեռ ևս նոր է հիմնված, ուստի նրա նիւթական գրութիւնը կատարելապէս այնքան ապահովված չէ, որ նա, առանց որ և է դրամական միջոցների կարողանար ապահով և յարատեւ աշխուժեամբ շարունակել իր գոյութիւնը. սակայն գէթ առ այժմ ունի յատկացրած հետեւեալ արդիւնքների աղբիւրները, որք են. Ա) եկեղեցապատկան 25 դեռնատին տարածութեամբ վարելահողերի կէս մասը, որոնք առաջ լրովին գտնվում էին տեղական քահանայների իշխանութեան ներքոյ, որոնցից տարեկան ստացվում է 5 արդիւնք 40 ռ.: Բ) Մատրասի Սուրբ-Աստուածածնի եկեղեցու մայր գումարի տոկոսիքը, որ գոյացնում է 30 ռ.: Գ) Աշակերտներից թոշակադրում է ստացվում տարեկան 240 ռուբլ: Այս ամենից ընթերցողը ինքն կարող է հասկանալ, որ վերոյիշեալ աղբիւրներից ստացված արդիւնքների կարող են կազմել ոչ աւելի քան մի ուսուցչի տարեկան ուսման: Այս է պատճառը, որ երբ դպրոցիս ուսուցչիչ աշակերտների բազմութեան պատճառով (Մատրասի ուսումնարանում գտնվում են 85 աշակերտներ) ծանրաբեռնված է նրանց աւանդելի բազմաթիւ առարկաներով, հոգաբարձութիւնը ի նկատի ունենալով իր նիւթական անկարողութիւնը, չէ կարողանում մի այլ ուսուցչի վարձել, որով ուսումնարանը, իր նպատակի համապատասխան չէ առաջ ընթանում: Սակայն և այնպէս հոգաբարձութիւնը կարելի եղած միջոցները գործ է դնում դպրոցի նիւթական գրութիւնը բարեօրէն, որով և նրա գոյութիւնը ապահովելու համար:

Մօտ օրերումս հոգաբարձութիւնը սրտի ուրախութեամբ ստացաւ մատրասեցի, բայց Բագու քաղաքում բնակվող պ. Գէորգ Ղարամանեցից մի նամակ, որով յիշեալ պարոնը յայտարարում էր, որ ինքը Բագու քաղաքում յօգուտ Մատրասի ուսումնարանի կամաւոր նուիրատուութիւններ է ժողովել, որից գոյացել է մօտ 60 ռուբլ, և մի և նոյն ժամանակ յայտնում էր որ մտադիր է այս նուիրատուութիւնը շարունակել մինչև մի նշանաւոր գումարի գոյանալը, որից յետոյ խոստանում էր զրկել նրանց: Արդարեւ գովութեան արժանի և միանգամայն օրինակելի է յիշեալ ազգասէր պարոնի բարեմիտ ձեռնարկութիւնը, որ տեսնելով իր հայրենի գիւղի ուսումնարանի նիւթական զգալի կարօտութիւնը և ցանկանալով իր կարողութեան չափ նպաստումատոյց լինել նրան, սկսել է նուիրատուութիւններ ժողովել յօգուտ նոյն դպրոցի, որի մասին հրապարակաւ յայտնում ենք մեր սրտի խորին շնորհակալութիւնը:

Լիայոյս ենք որ յիշեալ պարոնը, ինչպէս խոստացել է կը շարունակի իր այս ազգօգուտ գործունէութիւնը, որով նա մասամբ թեթեւութիւն կը տար մեր ուսումնարանի նիւթական անապահով գրութեանը:

Մատրասի ուսումնարանի նիւթական միջոցների աւելացնելու նպատակով այժմ հասարակութեան մէջ մի հարց էլ է բարձրացել: Մի քանի պարոններ, որոնց թիւում և դպրոցի մեծ հոգաբարձուներ կամենում են, որ այստեղ ուսումնարանի հաշուով մի կրպակ բացվի, որտեղ վաճառվեն գիւղացիների համար ամենակարեւոր և ամենակենսական պիտոյքները՝ աղ և նաւթ, մի և նոյն գնով, ինչպէս որ քաղաքում են գնում, որտեղից իւրաքանչիւր գիւղացի պարտաւորված լինի գնել իրան հարկաւոր եղած նաւթը և աղը, և բացի այդ կրպակից ոչ ոք իրաւունք չունենայ վաճառ հանելու յիշված միջոցներից: Թէ որքան օգուտ կարող է բերել այսպիսի մի ձեռնարկութիւն, այդ ապացոյցները կարօտ չէ, մինչդեռ հաստատ տեղեկութիւններից յայտնի է մեզ, որ այսպիսի հիմնարկութեանց տարեկան առ նուազն զուտ արդիւնք կարող է ստացվել 300 ռուբլ, որ բաւական ապահովութիւն կարող էր լինել այս ուսումնարանի համար:

Այժմ այս հարցը հասարակութեան ամենօրեայ խօսակցութեան առարկայ է դարձել, միայն ցանկալին այն էր, որ շուտով իրագործվէր և ինչպէս առհասարակ սովորութիւն է մեղանում անձնական շահերը գերադաս չը համարվէին ընդհանուրի օգուտը: Ի՞նչպիսի մեծ բարեբարութիւն արած կը լինէին մեր Բագուաբնակ պ. պ. գործարանատէրերը, եթէ նրանք ազգասիրական կէտից նայելով իրանց գործարանների նաւթից փոքր ինչ մասը հանէին Մատրասի քաղաքի դպրոցի այս նախասահմանված նոր բացվելի կրպակին, որոնց վաճառ հանելով նա փոքր ի շատէ պէտք է բարեօրէն իր նիւթական գրութիւնը, որով և ապահովէր իր գոյութիւնը: Մեր պատուելի բագուեցիք, որոնք առ հասարակ ամեն տեղ հաշակված են իրանց առաքելական և ազգօգուտ գործունէութեամբ մասնաւոր ազգային հիմնարկութիւնների և հաստատութիւնների վերաբերութեամբ, քաջայայտ ենք, որ նրանք չեն զլանայ և իրանց ուշադրութեան գէթ ամենափոքր մասն ևս դարձնել Մատրասի աղքատ դպրոցի գրութեան վրա, մասնաւոր առաւել այն պատճառով, որ այս դպրոցի առաջադիմութիւնիցն է կախված մի բազմամար հայաբնակ գիւղի վաղուց մոռացված հարազատ մայրենի լեզուի վերակենդանան աշխուժեցումը:

Մի քանի խօսք եմ Մատրասի եկեղեցու բարեկարգութեան մասին: Չը նայելով որ Մատրասի եկեղեցին փառաւորված է թէ իր չինութեան հոյակապութեամբ և թէ իր ներքին և արտաքին բարեկարգութեամբ, այնու ամենայնիս առաջ քան ուսումնարանի բաց անելը դուրի էր մի օրինաւոր ժամանակութիւնից. փոխառացութիւնները մինչև անգամ քահանայներն էին կատարում: Իսկ այժմ ընդհակառակն շնորհիւ տեղական ուսուցչի բարեխն աշխատութեան փոքր ինչ պայծառ դիրք է ստացել: 10 երգեցող աշակերտներ պարտաւորված են իւրաքանչիւր շաբաթ և կիրակի օրեր եկեղեցում ժամասացութիւն անել. բացի սրանից, որոշված է, որ իւրաքանչիւր երեկոյ վերոյիշեալ աշակերտները երկուրդ ներկայ գտնվեն եկեղեցում, հարկաւոր եղած փոխառացութիւնները ասելու համար:

Սարգիս Լալաբէկեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 28 յունիսի

«Արեւելեան Մամուլ» ամսաթիւթը որ եօթը տարի իր պաշտօնը անընդհատ շարունակեց Մամուրեան Մատթէոս էֆէնդի խմբագրութեամբ, ութերորդ տարվայ սկիզբը բաժանորդաց նուագութիւնից դադարելու ստիպեցաւ. հետեւապէս իր գրութիւնը անձուկ վիճակի մէջ է և գործի սկիզբը մեծ փոփոխութիւն կարելի չէ ակնկալել: Այժմ և Պօլսի մէջ կազմվել է մի մասնաժողով «Արեւելեան Մամուլի գործակալ մասնաժողով» անունով, որի անդամները աշխատում են ամեն տեղ, ամեն հայաբնակ քաղաքներում գործակալատարներ գտնել, որոնց միջոցով կարելի լինի գտնել շատ բաժանորդներ, որով նպատած կը լինեն թէ նիւթապէս և թէ բարոյապէս գործի շարունակվելուն:

Այդ մասնաժողովը արժան համարեց առաջարկել ինձ գործակալատարի պաշտօնը յանձն առնել Ռուսաստանի քաղաքներում հայ ցանկացողներից դրամ ստանալ և ուղարկել խմբագրատանը:

Ամսաթիւթի գինն է տարեկան ութը ռուբլի և տարին սկսվելու է այս տարվայ մայիս ամսից: Եւ ինձ համար, քաղցր պարտաւորութիւն եմ համարում յայտնել լրագրի միջոցով և հրաւիրել կարգացողաց հայ հասարակութեան ուշադրութիւնը—նպատակ այդ օգտակար ամսաթիւթի շարունակվելուն ստորագրվել, որով երկու տէրութիւնները մէջ գտնված բազմահայ հասարակութիւնների մէջ գրականական կապ կը հաստատվի: Այս էլ փոքր բան չէ: Գործը աւելի առաջ գնալու համար կարող են մի և նոյն քաղաքի կամ գիւղի մէջ մի քանի անձինք ընկերութեամբ դրամ ժողովել և ստորագրվել վասնորոյ, պ. խմբագիր, խնարհաբար խնդրում եմ, բարեհաճեցէ՛ք ձեր պատուական լրագրի միջոցով հրատարակել այս երկող հրահրել ի գիտութիւն ցանկացողաց, որով ձեր կողմից աւելի նպաստած կը լինէ՛ք գործին, քան թէ ես Հարկաւոր եմ համարում մի և նոյն ժամանակ յայտնել որ բաժանորդաց անունները կը ապագրվեն լրագրի միջոցով, որպէս զի թէ խմբագրութիւնը, թէ մասնաժողովը և թէ նոյն իսկ ստորագրվողը ապահով լինեն այդ մասին:

Գրավաճառ Զաքարիա Գրիգորեանց:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի վարչութիւնը խնդրում է մեզ յայտնել որ ուսումը այդ դպրոցում սկսվելու է սեպտեմբեր ամսի 1-ին և ոչ թէ 11-ին, ինչպէս սխալմամբ յայտնված է եղել «Մշակի» մէջ:

Կովկասեան հեռագրական վարչութիւնը յայտնում է որ նոր նուաճած երկրում Արդանուշ քաղաքից մինչև Արտվին քաղաքը վերջացած է հեռագրական թիւը: Այդ տարածութեան վրա ընդունվում են մասնաւոր հեռագրիւններ:

«ՕՃՅՈՐԵ» լրագրին գրում են Վանք գիւղից, որ Գանձակի անկանոն հեծեալադր գունդի օֆիցերները, որոնք բոլորն էլ մասնատականներ են, նուրբերումս իրանց մէջ ստորագրութեամբ հաւաքելով 350 ռուբլ, նուիրեցին այդ գումարը յօգուտ ուսուց կրէսիւնների կամաւոր նաւատորմի կառուցման:

Յիշեցնում ենք «Մշակի» ընթերցողներին, որ մեր թիւթի կէս տարվայ բաժանորդագրութիւնը արդէն սկսվել է: «Մշակին» կէս տարվայ գինը 6 ռուբլ է: «Մշակին» գրվել կարելի է միմիայն խմբագրատան մէջ, որ գտնվում է Թիֆլիսի Խմբագրատան փողոցի վրա, Արծրունու գալէրէում: Օտարաքաղաքայից դիմում են ուղղակի այս հասցէով Тифлисъ, въ Редакцію газеты «Мпшакъ»:

Թիֆլիսի Խմբագրատան շրջ եղանակ է անում Գարնան անընդհատ անձրեւներից յետոյ, ահա մի քանի շաբաթ է որ ոչ մի կաթիլ անձրեւ չէ գալիս: Քաղաքը ստացել է արդէն իր ամառվայ սովորական տեսքը՝ բնակիչների ունեւոր դասը հեռացել է զանազան ամառանոցներ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՊԱՆԻԱ

Հեռագիրը արդէն լուր բերեց թէ Սպանիայի նորապսակ թագուհին մեռել է: Յուզարկաւորութեան հանդէսը նկարագրող եւրօպական լրագրիւնները դեռ մեզ չեն հասած. բայց թագուհու հիւանդութիւնն էլ շատ կարճ տևեց և մեր ընթերցողները այդ մասին տեղեկութիւն ստացած չը լինելով Մարիլից յունիսի 22-ին «Independance Belge» լրագրին ուղարկված մի նամակից քաղում ենք հետեւեալը:

Վերկու օր է որ Մէրսէրէս թագուհին ծանր հիւանդ է: Նրեք շաբաթ առաջ մի տեսակ ջերմ և ստամոքսի տկարութիւն ունեցաւ, բայց այնչափ վատագուր չէր. յետոյ ջերմը սաստկացաւ, ստամոքսի արտաբերութիւնները

շատ անգամ կրկնվեցան և ընդհանուր տկա-
րութիւն տրեց նրա վրայ: Գրեթէ կրկն շա-
բաթ է որ երկտասարթ թագուհին պառկած
է անկողնում: Հինգշաբթի գիշեր աւելի ծան-
րացաւ նրա դրութիւնը: Ստամոքսային ջերմի,
fièvre gastrique բոլոր նշանները երևում
էին նրա վրայ ստատկացած: Երէկ բազմաթիւ
բժշկների խորհրդակցութիւն եղաւ պարա-
տում: Երբ թագաւորը խնցաւ նրանց կար-
ծիքը տան գլխաւոր բժշկից, խիոյն բերել
տուեց Հնդկաստանի կարգինալ պատրիարքը
որ ժամերով մնաց Ալժիրում: Մի օր: Թէ
ազնուազնական դասակարգից, թէ դեւ-
պաններից և թէ քաղաքական պաշտօնա-
տարներից շատերը երթեկեկում են արքունի
պալատը և լուր են խնդրում թագուհու ա-
ռողջութեան մասին: Բժիշկները, երկրորդ
անգամ խորհրդակցութենից յետոյ, յայտ-
նեցին թէ թագուհու դրութիւնը շատ վե-
տանգաւոր է և թէ ստամոքսային ջերմի հետ
ունեցել է և ընդհանուր անդամների թրմ-
րութիւն, որից նա արթնանում է իր ձգնա-
ժամերի ժամանակ միայն: Թագաւորը չէ
հեռանում անկողնի գլխից և Աստիւրի իշ-
խանուհին անդադար աշխատում է հիւանդի
մօտ: Այս առաւօտ էլ բժիշկները խորհ-
րակցեցան և այլ ևս չը ծածկեցին Ալժիրում
XII-ից թագուհու հիւանդութեան ծանրու-
թիւնը: Այս համարները բնականապէս շատ
տխուր ազդեցութիւն ունեցան ամեն դասա-
կարգի մարդկերանց վրայ: Գեռ հաղեւ հինգ
ամիս է անցկացել որ չբեղ հանգստի կա-
տարվեցան տնեւը համար Մերսէրէսի ա-
մուսնութիւնը Ալժիրում XII-ի հետ:

Մագրիբից յունիսի 24-ին հաղորդում են
եւրոպական լրագրողներին հետեւեալ տեղե-
կութիւնները: Թագուհու վտանգաւոր հի-
ւանդութիւնը հեռագրով յայտնեցին Մօն-
պանիէ գուբերն, որ իր ընտանիքի հետ
միասին Փարիզից եկաւ այսօր Մագրիբ: Այս
գիշեր Մերսէրէս թագուհու հիւանդութիւնը
այնպէս սաստկացաւ որ կեանքը բոլորովին
վտանգի մէջ է: Մեծ շփոթութիւն է տի-
րում պալատում, կառավարական և զին-
ւորական շրջաններում: Նոյն իսկ այսօր
թագուհին մոտում է տանիքները տար-
վայ ծաղիկ հասակի մէջ: Հնդկաստանի պա-
տրիարքը վերջին ա. հաղորդութիւն տուեց
նրան, ի ներկայութեան թագաւորի, ար-
քունական գերագետների և մինիստրների:

ԹԻԻՐԻՒՄ

Ալեքսանդրի «Politische Correspondenz»
լրագրին Պ. Պօլից գրում են յունիսի 8-ին
հետեւեալը. «Սուլթանի անձի դէմ եղած դա-
ւաճանութիւնների մասին անդադար լուրեր են
տարածվում: Ստամբուլում: Նախագրաւորում
են մինչև անգամ օրը, թէ դաւաճանու-
թիւնը երբ կը կատարվի: Այստեղ կարգերի
հետ ծանօթ մարդկանց չէ զարմացնի այս բանը:
ամենքին յայտնի է որ հարկաւոր մարդիկ
մասնակից էին 1867 թ.ի դաւաճանութեանը,
որի մէջ իրան մատնեց Ալեւ-Սուլթանը և որ
աւելի շատ մարդիկ առաջուց գիտէին այն
դաւաճանութեան մասին, որը Հուսէյն Ալի
և Միրզա Բեհմանիւրի առաջնորդութեամբ,
սուլթան Սեյիդ-Ալիին գահակցութեան և
մահման պատճառ դարձաւ, այնպէս և այժմ
համարեա, ազատ կերպով խօսում են այն
բանի մասին, որ Նալիզադէի օղակի տակ ապս-
տամները գեանափորներ են փորել և որ մի
անգամ նա սարսափելի կերպով կը տուաբվի
և կը կործանէ ու կը սրբէ սուլթանին իր
սիրելիներով: Ենթադրելով և ուրիշ ծառա-
ներով: 24 կարելի հեքել, որ Աբդու-Հա-
միդը վերջին ժամանակներում շատ բազմա-
ցրեց իր թշնամիների թիւը: Նասիր-Փաշան,
որը որպէս առաջին նշանակաւոր, հրաժար-
վեցաւ սուլթանի վճիռը յայտնելու Մեհ-

մեդ-Ռուշտի-Փաշային, առանց նրան պաշտօ-
նից զրկելու ճեղք կատարելու, աքաղեցաւ
պալատից, և ընդգրկեց իր կուսակցութեան
առաջնորդ Մեհմեդ-Ռուշտի-Փաշայի կոնսլը,
չըջապատված է այժմ ժողովրդեան խուռն
բազմութեամբ, ինչպէս և այն ժամանակները,
երբ նա մեծ վեղիւր էր: Նոյնպէս հաստա-
տում են, որ դաւաճանները, որոշեցին վեր-
ջապէս սուլթանի ապագայ յաջորդին և ըն-
տրեցին Աբդու-Մեհմեդի կրտսէր որդի՝ Բե-
հմեդ-Մեհմեդին: Ոչ դր չը գիտէ, թէ ինչ
կը լինի այս նախագծերի և դաւաճանու-
թիւնների հետեւեալ, բայց եւրօպացուն
սարսափեցնում է ամբողջ Ստամբուլի մէջ
թագաւորած յուզմունքը, որ արտայայտ-
վում է կասկածելի խուռների և գաղտնի
խօսակցութիւնների մէջ: Երէկ, բազմաթիւ
գիշերապահ զինուորներ շրջում էին փողոց-
ներում և մինչև անգամ մեծ բազարի ան-
թիւ գաղտնի տեղերում: Բայց այս զգուշու-
թեան միջոցը նպատակ ունի ոչ միայն դա-
ւաճանութիւնը արգելել, այլ և հասարակաց
հանգստութեան խանգարելու փորձը հեռաց-
նել և քաղցած գաղթականների կողմից
քրիստոնեաների կեանքի և կարողութեան
դէմ անելու փորձին արգելք դնել: Կօն-
րէսի բացվելը, ինչպէս երևում է, շատ
պեցնելու ներգործութիւնը ունեցաւ ուս-
սաց զինուորական պատրաստութիւնների վրայ:
Նրանց բռնած դրութիւնը աւելի և աւելի
սպառնալից ընթացք է ստանում: Թուրքաց
օժիցները, իրանց կողմից, հաւատացնում
են որ շատ զգուշութեամբ են կարողանում
սանձահարել իրանց զինուորներին, և երկիւղ
են յայտնում, որ միանգամ գործը արեւ-
նահեղ կուռի կը հասնի: Չանազան նշանները
ցոյց են տալի, կարծես, որ անգլո-թիւրքա-
կան դաշնակցութիւնը թէպէտ և դեռ չէ
հաստատվել, բայց պատրաստվում է: Յունիսի
15-ին Ահմեդ-Սուլթան-Փաշան, ծովապետ
Հօրնթի հրաւիրով այցելեց անգլիական նա-
ւատորմը: Նրան գիտնաբերեցին ծովապետա-
կան նաւի վրա մեծ պատիւներով և նա,
հոյակապ նախաձեռնից յետոյ, մանրամասն
տեսաւ էսկադրի մի քանի նաւերը:

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԱՅԻՑ

Բերլին, 29-ին յունիսի 78.

Անցեալ նամակներէս մինի մէջ հաղորդել
էի, որ հայոց պատգամաւորներն էլ հասել են
այստեղ, հայոց հարցի համար աշխատելու:
Նրանք են սրբազան խորհրդան Մկրտիչ արքե-
պիսկոպոս, սրբազան Նարբէյ խորէն արքեպիս-
կոպոս, պ. Ստեփան փափազեան, պ. Մինաս
Չէրազ, խորհրդան սրբազանի քարտուղար 1) և
պ. Պէյրիսեան, որ իբրեւ գերմանիէի թագման
եկաւ Փարիզից այստեղ: Թիւրքիայի հայերի ցան-
կութիւնները և ձգտումները եւ աւելորդ եմ հա-
մարում մի առ մի կրկնելու, որովհետեւ նրանք
ձգտում են Nordd. Allg. Zeit. այն
յօդուածի մէջ, որին ես նորերումս թարգմանեցի
(«Մշակ») համար: Հայերի այս ցանկութիւնները
ամեն կողմից, եւրօպական լրագրութիւնը իրա-
ւացի և չափաւոր է համարում, այնպէս որ յոյս
կայ որ նրանք կընդունեն կոնգրէսից: Ամեն
կողմից երևում է մի անկեղծ համակրութիւն, որ
ցոյց են տալիս թէ այստեղի բարձր շրջանները
թագաւորական զինուոր, թէ կօնգրէսի անդամ-
ները, և այդ համակրական ցոյցերը կարելի
է մի բարի նշան համարել գործի աշխուրդեան
համար:

Թիւրքիայի հայոց պատգամաւորութիւնը այս
օրերս թագաւորական ընդունիլիցաւ, իսկ երէկ
(28-ին) ճաշի էր հրաւիրած թագաւորական մօտ

1) Այս առիթից օգուտ եմ քաղում, որ յիշեմ
թէ Труд. Вѣст. մէջ տպված մի յօդուածը, որը
արտասուեց «Մշակը», ստույգ չէր, որ խորհրդան
արքեպիսկոպոս մի քանի թարգմաններ իր մօտ
ունէր իր ճանապարհորդութեան ժամանակ: Նո-
րա միակ թարգման և քարտուղար է պ. Մ.
Չէրազ: Նոյնպէս ստույգ չէ պ. Չէրազի խորհրդան
սրբազանի աշակերտ լինելը, պ. Չէրազ Նու-
բար-Հանապադեան ուսումնաբանի աշակերտ է:

Պօտսդամի մէջ: ճաշի վրա կային նախկին
նախագահ Ամերիկայի Միացեալ-Նահանգների,
գեներալ Գրանտը և Նոյնպէս Սերբիայի, Չէրնո-
գորիայի, Ռումինիայի և Գունաւաստանի ներկա-
յացուցիչները:

Հայոց պատգամաւորութիւնը կատարեալ մի-
ութեամբ գործում է ընդհանուր գործի համար և
ոչինչ նշոյլներ չը կան կուսակցական տարբե-
րութիւնների, որոնց մասին նորերումս տեղեկաց-
նում էր «Օճօրը» լրագրի թղթակիցը պ. Պօլ-
սից: Այս ընդհանուր գործի մէջ ոչ կուսակցու-
թիւնների, ոչ դաւաճանութիւնների տարբերութիւն
կայ: Թէ այսպէս անուանված Ռուսաստանի
կուսակցիցները, թէ Անգլիայի կուսակցութիւնը,
թէ լուսաւորական, կաթօղիկ և բողոքական—
բոլորն էլ միասին մի կուսակցութիւն են կաղ-
մում որ կարելի է ազգային անուանել. ա-
մենքն էլ մոռացան իրանց անձնական հաշիւ-
ները և միաւորվել են ընդհանուր գործի համար:
Եթէ մեզ, հայերիս համար միշտ ասվում է,
որ միութիւն չը կայ մեր մէջ և այդ իբրեւ մի
յատկանիշ կողմ մեր ազգային բնաւորութեան
են ցոյց տալիս, դա սխալ գաղափար է իմ կար-
ծիքով: Ամերիկացի լինելը կարծես այն իրողու-
թենիցն է պատճառված, որ հայերիս մօտ շատ
սակաւ էին պատահում ընդհանուրին վերաբե-
րող մեծ և նշանաւոր հարցեր, որոնց վճռու-
համար ամենքը պիտի ձեռք ձեռք տուած
միասին առաջ գնային: Մեր ազգի զգաւորու-
թիւնները հասցրել էին նրան մինչև մի գրու-
թեան, որի մէջ միայն մանր խտրեքներ էին
երևան գալիս—իսկ մասն հարցեր միշտ ա-
ռաջացնում են մասն կուսակցի, որոնց
իրանք էլ իրանց կողմից ստորագրում են մար-
դու բնաւորութիւնը: Երանի նրանց, որոնք հայ
ազգի անդամ լինելով, կարողացել են իրանց
հեռու պահել զանազան մանր հարցերից, կամ
նրանց մասին խօսելով էլ, իմացել են նոյա
վրա բարձրից նայել և չը խղիցան մանր կուս-
ների մէջ: Հայերը այժմ ան ապացուցանում
են իրանց խոհեմ գործունէութեամբ, որ նրանք
հասուն են նմանապէս և բարձր և ընդհանուր
գործեր առաջ տանելու և դիտեն երկրորդական
տեղ տալ մասնաւոր հարցերին, երբ պիտի որոշ-
վի ընդհանուրութեան վերաբերվող նշանաւոր մի
հարց:

Մի քանի խօսքով արդէն առիթ ունեցայ նա-
մակներէս մինի մէջ հեքել որ ուստական կամ
անգլիական կուսակցութիւններ իրար դէմ թըշ-
նամի են, միայն հիմնվելով այն անձնական
ուպաւորութիւնների վրա, որ ստացել էի ար-
ժանանալով մի տեսակցութեան խորհրդան և
Նարբէյ սրբազանից: Երանի, որոնց մասին էր
իսկ ասում «Օճօրը» լրագրը, որ նրանք գլուխ-
ներ են յիշված երկու թշնամական կուսակ-
ցութիւնների: Այժմ ոչ միայն տպաւորու-
թեան վրա հիմնվելով, այլ աւելի մօտ ծանօ-
թանալով գործի հետ կարող եմ հաստատել որ
կատարեալ միաբանութիւն տիրում է հայոց
պատգնի պատգամաւորութեան մէջ և որ նա
միացած ոյժերով է աշխատում և աշխուրդեցել ամ-
բողջ թիւրքաց Հայաստանի գործը: Իսկ այդ
ապացոյցն է ինձ համար որ և բուն Հայաստանի
և պ. Պօլսի մէջ կուսակցութիւնների տարբերու-
թիւն չը կայ առ այժմ:

Այն մեծուարը, որի մասին խօսվում էր «Nordd.
Allg. Zeit.» յիշված յօդուածի մէջ, որպէս տե-
ղեկանում եմ ստույգ աղբիւրից, արդէն ներ-
կայացված է կօնգրէսին: Մեծուարը որ իր մէջ
պարունակում է մանրամասն տեղեկութիւններ
Հայաստանի մասին և հայ ազգաբնակչութեան
պահանջները, համակրութեամբ ընդունիլիցաւ
իշխան Բիւսմարկից, և ներկայացվեցաւ կօնգրէ-
սին: Կօնգրէսը, որի բոլոր անդամներն էլ ստա-
ցել էին նոյն թղթերի օրինակներ և Հայաս-
տանի մի մի քարտեզը, վճռեց հայոց հարցը օրա-
կարգի վրա նշանակել, այնպէս որ զորա հեքել
կը լինի յունիս ամսի առաջին շաբաթվայ մէջ:

Եթէ չեմ սխալվում ամեն նշանները ցոյց
են տալիս, որ գործը կարող է աշխուրդ Ման-
րամանները միւս նամակին թողնելով, վերջաց-
նում եմ այսօր, խոստանալով ամեն նոր տեղե-
կութիւններն էլ հաղորդել:

Ա. Արծրունի

ԽԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ

«Голосъ» լրագրում տպվեցաւ այն յիշատա-
կագրի թարգմանութիւնը, որ հայոց ղեկավա-
րներ ներկայացրին կօնգրէսին, և որի մէջ նոյա

խնդրում են կօնգրէսից մօտենլ թիւրքաց Հա-
յաստանում կառավարչական վերանորոգութիւն-
ները: Կաշխատենք ծանօթացնել մեր ընթեր-
ցողներին այդ յիշատակագրի բովանդակութեան
հետ:

Յիշատակաւոր պատմական ամսագրում գը-
րում են որ փարիզում այն օրերս սպասում են
աֆրիկական թագաւորների մէկի զարու: Գեորգ,
Իթնի թագաւորը այժմ Լօնդօնում է գտնվում,
որ նրան շատ սիրով ընդունեցին լօրդ-մերը և
շատ նշանաւոր անձինք: Նա կատարեալապէս խօ-
սում է անգլիկերէն լեզու, և մի փոքր էլ
ֆրանսիերէն: Լօնդօնից նա դիտարկութիւն
ունի Փարիզի աշխարհահռչակ գնալ: Այս
թագաւորի երկիրները գտնվում են Աֆրիկայի
արեւմտեան ափի վրա, Նիգերի գետայամ: Նը-
րանց ազգաբնակչութիւնը 20,000-ի է հասնում:
Իթնի երկիրը շատ պղտատու է. այնտեղ բուս-
նում են չաքարի եղեգն, արմաւենի, բամբակ
և այլն: Նա իւրի, բամբակի, փղօսկրի և մրգե-
ղէնների առևտուր ունի:

Յունիսի 26-ին Սօթօնում փարիզի աշխար-
հագրական ընկերութեան հանդիսարար նիստ
կայացաւ, որ վճռվեցաւ տալ ոսկէ մեծ մեդալ
Հէնրի Մօրելանդ Ստանլէյին ինչպէս ասված
է վկայականի մէջ: Չը նայելով սաստիկ չեքին
(31 աստիճան 35 րոյի ջերմաչափով), մեծ բազ-
մութիւն կար, մանաւանդ տիկիները շատ էին:
Նախագահ, ծովապետ Լաթօնսը Լընուրի ներ-
կայացրեց պ. Ստանլէյին, Ամերիկացի ճանա-
պարհորդ, ասում է «Figaro» լրագրը, սպի-
տակ վկայագրով, միտ ամօթեալով որպէս երի-
տասարդ ազնիւ խոնարհեցնելով աչքերը լսեց
դէպի իրան ուղղած հրացան ուղղութիւնը, Գե-
տոյ նա ներկայացրեց կարճ հաշիւ իր ճանա-
պարհորդութեան մասին, վերջը բերին և տուե-
ցին նրան ոսկէ մեծ մեդալը, և յետոյ ողջունե-
ցին նրան բարձրաձայն ուրաներով և բրաւօնե-
րով:

ՄԵՍԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԵՍԿԻ ՀԵՐԱԳԻՐՆԵՐ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՓԱՐԻԶ, 27 յունիսի (9 յուլիսի): Այստեղի
լրագրիները քննարկատու են անգլո-թիւր-
քաց համաձայնութիւնը: «Moniteur Universel»
ասում է թէ Կիպրոս կղզին ներկայաց-
նում է գերազանց դիրք եգիպտոսը և Փար-
սիայի պաշտպանելու համար, բայց այդ
կղզու գրաւելը թանգ կը նստի Անգլիային,
որովհետեւ նորան գրաւելով Անգլիան յանձն է
առնում Թիւրքիային պաշտպանելու դժուար
գործը: «Constitutionnel» լրագրը կարծում
է որ Կիպրոս տիրելուց յետոյ, Անգլիան կը
գրաւի և եգիպտոսը: «Liberte» լրագիրը նը-
կատում է որ անգլիացիների Կիպրոսի գրա-
ւելը Միջերկրական ծովի մօտ գտնվող ոչ մի
պետութեան նախանձ շարժել չէ կարող:
«Presse» լրագիրը համարում է Կիպրոսի Ան-
գլիային տալը, որպէս մի վարձատրութիւն,
որ պարտ էին Անգլիային և այդ գործը չէ
համարում սպառնալից Ռուսաստանի դէմ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, յունիսի 29-ին: Պետական
բանկի 50% տոմսեր առաջին շրջանի արժէ
967/8 ռ., երկրորդ 95 ռ. 25 կ., երրորդ 96
ռ. չորրորդ 96 ռ. ներքին առաջին 50%
փոխառութեան 247 ռ. 50 կ., երկրորդ
244 ռ. 50 կ., արեւելեան 95 ռ., ոսկին 7 ռ.
73 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ
24,75 պէնս, ռուսաց 100 ռուբլ Գերմա-
նիայի վրա արժէ 218 մարկ 50 Ֆեն., Փա-
րիզի վրա 269 ֆրանկ: Տրամադրութիւնը
Բօրսայում ամօր է:

ԲԵՐԼԻՆ, յունիսի 27-ին (յուլիսի 9): «Тол-
ковъ» լրագրին հեռագրում են որ երէկ
ռուսաց և անգլիական լրագրողները երկար
տեսակցութիւն ունեցան միմեանց մէջ: Նը-
րանց կենդանի խօսակցութեան առարկայ
Բաթումի խնդիրն էր, որ բաւական առա-
ջացաւ և գրեթէ բոլորովին լուծված է: Դոնէ
այսքան յայտնի է, որ Բաթումը մնում է
ռուսներին և դաշնագրութեան մէջ յիշված
էլ չէ լինի անգամ որ ամենները հիմնայա-
տակ անեն Բաթումի ուղումթիւնները, թէեւ
առաջ այդ մասին խօսը կայ:

ԼՕՆԴՕՆ, 28 յունիսի (10 յուլիսի): Անգ-
լիայի բոլոր ազատամիտ ընկերութիւնների
ընդհանուր ժողովը հրատարակեց մի ազգա-
րարութիւն, որով հրաւիրում է անգլիական
ժողովուրդը բողոքել Կիպրոսի Անգլիային
միացնելու և թիւրքաց տէրութեան հետ
անգլիական տէրութեան կողմից գաղտնի
դաշն կապելու դէմ:

Կ. ՊՕԼԻՍ, յունիսի 27-ին (9 յուլիսի):
Ուլեմները այս շաբաթ օր կայացած խորհրդի
նստի մէջ առաջարկեցին բարձրացնել մար-
գարէի դրօշակը: Մարիլենում անկարգու-
թիւններ պատահեցան:

